| դաստիարակի օգնական | 4 | 54600 |
| երաժշտ.դաստ. | 0.75 | 54000 |
| խոհարար | 1 | 52500 |
| խոհարարի օգնական | 0.5 | 47600 |
| ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 0.5 | 54000 |
| բակապահ | 1 | 46300 |

Հավելված թիվ 1
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 15 -ի թիվ 272 -Ա որոշման

«ԴԻԼԻՋԱՆԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 8
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝7,25

| Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| տնօրեն | 1 | 85000 |
| հաշվապահ | 0.5 | 52800 |
| բուժքույր | 0.5 | 50500 |
| գործավար | 0.5 | 50500 |
| դաստիարակ | 2 | 79400 |
| դաստիարակի օգնական | 1 | 54600 |
| երաժշտության դաստիարակ | 0.25 | 54000 |
| խոհարար | 1 | 52500 |
| խոհարարի օգնական | 0.5 | 47600 |

Հավելված թիվ 1
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 272 -Ա որոշման

«ԴԻԼԻՋԱՆԻ ԹԻՎ 6 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 13
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 11

| Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| տնօրեն | 1 | 85000 |
| հաշվապահ | 0.5 | 52800 |
| գործավար | 0.5 | 50500 |
| բուժքույր | 0.5 | 50500 |
| ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 0.5 | 54000 |
| դաստիարակ | 3 | 79400 |
| դաստիարակի օգնական | 2 | 54600 |
| երաժշտության դաստիարակ | 0.5 | 54000 |
| խոհարար | 1 | 52500 |
| խոհարարի օգն. | 0.5 | 47600 |
| բակապահ | 1 | 46300 |

Հավելված թիվ 1
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 272 -Ա որոշման

## «ԴԻԼԻՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 22
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 23,5

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| տնօրեն | 1 | 73600 |
| հաշվապահ | 1 | 62000 |
| մեթոդիստ | 1 | 46500 |
| տեխնիկական բաժնի վարիչ | 1 | 46500 |
| տեղեկատվության.հավաքագրման և համակարգման բաժնի վարիչ | 1 | 54400 |
| հրահանգիչ | 1 | 46500 |
| վարորդ | 1 | 46500 |
| դռնապահ | 1 | 46500 |
| տեղեկատու համակարգող | 1 | 60000 |
| տեղեկատու համակարգող | 1 | 60000 |
| լուսանկարիչ | 0.5 | 46500 |
| փողային նվագախմբի ղեկավար | 1 | 50000 |
| փողային նվագախմբի նվագակցող | 3 | 50000 |
| ժող.գործիքների նվագակցող | 1 | 46500 |
| էստրադային խմբի ղեկավար | 1 | 49500 |
| էստրադային խմբի նվագակցող | 3 | 46500 |
| Շամախյանի ակումբի պահակ | 1 | 46500 |
| Շամախյանի ակումբի հավաքարար | 0.5 | 46500 |
| Կամո թաղամասի ակումբի պահակ | 1 | 46500 |
| Կամո թաղամասի ակումբի հավաքա | 0.5 | 46500 |
| հավաքարար | 1 | 46500 |

Հավելված թիվ 1
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 15 -ի թիվ 272 -Ա որոշման

# «ԴԻԼԻՋԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 27
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 24.75

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| տնօրեն | 1 | 73600 |
| հաշվապահ | 1 | 48000 |
| աբոնենտային բաժնի վարիչ | 1 | 46500 |
| կոմպլեկտավորման բաժնի վարիչ | 1 | 46500 |
| մանկական բաժնի վարիչ | 1 | 46500 |
| մատենագիտության բաժնի վարիչ | 1 | 46500 |
| ընթերցասրահի ենթաբաժնի վարիչ | 1 | 46500 |
| արվեստ ենթաբաժնի վարիչ | 1 | 46500 |
| մամուլի ենթաբաժնի վարիչ | 0.75 | 46500 |
| կոմպլեկտավորման ավագ խմբագիր | 1 | 46500 |
| մատենագիտության ավագ խմբագիր | 1 | 46500 |
| մատենագիտության ավագ մեթոդիստ | 1 | 46500 |
| մանկական ենթաբաժնի վարիչ | 0.75 | 46500 |
| կոմպլեկտավորման գրադարանավար | 1 | 46500 |
| 2-րդ կարգի գրադարանավար | 1.50 | 46500 |
| Թիվ 1 մասնաճյուղի գրադարանավար | 0.75 | 46500 |
| Թիվ 1 մասնաճյուղի 2-րդ կարգի գրադարանավար | 2 | 46500 |
| Թիվ 2 մասնաճյուղի 2-րդ կարգի գրադարանավար | 1.5 | 46500 |
| Թիվ 3 մասնաճյուղի 2-րդ կարգի գրադարանավար | 1.5 | 46500 |
| Թիվ 4 մասնաճյուղի 2-րդ կարգի գրադարանավար | 1 | 46500 |
| Թիվ 5 մասնաճյուղի գրադարանավար | 1 | 46500 |
| Թիվ 5 մասնաճյուղի 2-րդ կարգի գրադարանավար | 1 | 46500 |
| հավաքարար | 1 | 46500 |

Հավելված թիվ 1
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 272-Ա որոշման

# «ԴԻԼԻՋԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 11

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 11

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Թանգարանի տնօրեն | 1 | 62000 |
| հաշվապահ | 1 | 48000 |
| ֆոնդերի գլխավոր պահապան | 1 | 51600 |
| գիտական ցուցադրության բաժնի գիտական աշխատող | 1 | 51600 |
| էքսկուրսավար | 1 | 48000 |
| 2-րդ կարգի նկարիչ-վերականգնող | 1 | 46500 |
| թանգարանի հսկիչ | 2 | 46500 |
| զանձապահ-հսկիչ | 1 | 46500 |
| հավաքարար | 2 | 46500 |

Հավելված թիվ 1
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 272 -Ա որոշման

# «ԴԻԼԻՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 2
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 2

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 73600 |
| Պահակ/հսկիչ | 1 | 56500 |

Հավելված թիվ 1
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 15 -ի թիվ 272-Ն որոշման

**«ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը 20
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 19,1

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| տնօրեն | 1 | 62000 |
| ուսմասվար | 0.5 | 48000 |
| հաշվապահ | 1 | 47000 |
| գործավ/գրադ. | 1 | 47000 |
| դաշն. լարող | 1 | 47000 |
| պահակ | 1 | 46300 |
| հավաք. | 1 | 46300 |
| ուսուցիչ | 12.6 | 46300 |

Հավելված թիվ 1
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 15 -ի թիվ 272-Ա որոշման

**«ԴԻԼԻՋԱՆԻ Հ.ՇԱՐԱՄԲԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը 15
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 20.7

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| տնօրեն | 1 | 73600 |
| հաշվապահ | 1 | 48000 |
| ուսմասվար | 0.5 | 58000 |
| գործավար-կազմակերպիչ | 1 | 46300 |
| տնտեսվար | 1 | 46300 |
| հավաքարար | 1 | 46300 |
| ուսուցիչ | 15.2 | 50000 |

Հավելված թիվ 1
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 15 -ի թիվ 272-Ա որոշման

**«ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը 16
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 16,75

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| տնօրեն | 1 | 83000 |
| հաշվապահ | 1 | 48000 |
| փոխտնօրեն | 1 | 62000 |
| ուսմասվար | 1 | 50000 |
| բուժքույր | 1 | 46300 |
| բժիշկ | 1 | 48000 |
| տնտեսվար | 1 | 46300 |
| հավաքարար | 2 | 46300 |
| հանդերձ. | 1 | 46300 |
| պահակ | 1 | 46300 |
| բանվոր | 1 | 46300 |
| մարզիչ | 4.75 | 46300 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 273-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16, 19 և 60 հոդվածներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. 2013թ. հունվարի 1-ից համայնքային ենթակայության բազմաբնակարան շենքերի սպասարկման մեկ քառ. մետրի համար սահմանել 10 դրամ:
2. Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցները և զոհված ազատամարտիկների ընտանիքները ազատվում են շենքերի սպասարկման վարձավճարից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ
4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
7. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
10. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
11. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
12. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 274-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԵԿ ՍԱՆԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ՍՆՆԴԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ համայնքի ավագանին որոշում է.

2012թ. հունվարի 1-ից Դիլիջանի քաղաքային համայնքի մանկապարտեզների մեկ սանին հասանելիք սննդի նվազագույն չափ սահմանել օրական 250 դրամ:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ
4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
7. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
10. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
11. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
12. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 275-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԴԻԼԻՋԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. 2013թ. հունվարի 1-ից այցելուների համար սահմանել ցուցադրության այցելության և բացատրության տոմսերի գներ՝

1)Մշտական ցուցադրության այցելության տոմսի գինը – 500 դրամ
2) Հայերենով բացատրության տոմսերի գինը -1500 դրամ
3)Օտար լեզվով բացատրության տոմսերի գինը – 2000 դրամ
2. Սահմանել թանգարանի մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություններ.

1)Աշակերտների և նրանց ուղեկցող ուսուցիչների համար՝ յուրաքանչյուր ամսվա երկրորդ ուրբաթ օրը
2)Բոլոր այցելուների համար յուրաքանչյուր ամսվա վերջին երեքշաբթի օրը
3)Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների և զոհված ազատամարտիկների ընտանիքների համար /կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայությունը պարտադիր է/:
3. Սահմանել թանգարանի կողմից առաջարկվող ծառայությունների վճար՝

1)Ցուցահանդեսների և այլ միջոցառումների համար սրահի տրամադրում – 1 օրը 20000-40000 դրամ/համաձայն պայմանագրի/
2)Առանձին իրադարձությունների, դեպքերի վերաբերյալ տեղեկանքների պատրաստում – 1 տեղեկանքը 2000 դրամ:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 276 -Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով « Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /ընդունված 15.11.2005թ./ 9-րդ հոդվածի 2-րդ կետը , 11-րդ հոդվածի 2- րդ կետը , 30-րդ հոդվածի 6-րդ կետը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական կազմակերպությունների տարիքային խմբերում սահմանել երեխաների ընդգրկման հետևյալ քանակը.

1)Մինչև 1 տարեկան --- 10-ից 15 երեխա
2)1-ից 3 տարեկան ------ 15-ից 20 երեխա
3)3-ից 6 տարեկան ------ 25-ից 30 երեխա:

2. Սահմանել Դիլիջանի քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների տարիքային խմբեր

1)Վաղ տարիք --- մինչև 3 տարեկան
2)Կրտսեր նախադպրոցական --- 3-ից 5 տարեկան
3)Ավագ նախադպրոցական --- 5-ից 6 տարեկան

3. Դիլիջանի քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկություններում 2013թ.. բյուջետային տարում պահել հետևյալ տարիքային խմբերը.

1)«Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն --- թվով 6 խումբ
2)«Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն --- թվով 6 խումբ
3)«Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» --- համայնքային ոչ առևտրային կազմակերպություն -թվով 5 խումբ
4)«Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ» --համայնքային ոչ առևտրային կազմակերպություն - թվով 4 խումբ
5)«Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» --- համայնքային ոչ առևտրային կազմակերպություն թվով 1 խումբ
6)«Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն --- թվով 2 խումբ

ԸՆԴԱՄԵՆԸ-------------------------------------------------- թվով 24 խումբ:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 277-Ն

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում 2013թ. համար անշարժ գույքի հասցեավորման համար սահմանել վճար 10000 դրամ գումարի չափով:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱՁՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

6. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

7. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

9. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

10. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

11. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 278-Ն

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8, 9, 10 և 11 հոդվածների պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում 2013թ. համար տեղական տուրքերը, վճարները և դրանց դրույքաչափերը, որոնց վերաբերյալ հավելվածը կցվում է սույն որոշմանը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ
4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
7. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
10. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
11. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

*Հավելված*
*ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի*
*քաղաքային համայնքի ավագանու*
*2012թ. նոյեմբերի 15-ի թիվ 278-Ն որոշման*

***ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ***

| | Տեղական տուրքի անվանումը | Դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | ***հիմնական օբյեկտների համար*** | |
| 1) | մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | 15.000 |
| 2) | *1 կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար, այդ թվում՝* | |
| ա. | 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 30.000 |
| բ. | 501-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50.000 |
| գ. | 1001 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 70.000 |
| | ***ոչ հիմնական շինությունների տեղադրման համար*** | |
| 3) | մինչև 20 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 3.000 |
| 4) | 20 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 5.000 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| 1) | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | 3.000 |

| | | |
|---|---|---|
| 2) | բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում են նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխման մասով | |
| 3) | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | 5.000 |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| 1) | ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | 5.000 |
| 2) | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | 5.000 |
| 5. | Համայնքի տարածքում | |
| 1) | բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար | 350 |
| 2) | հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված հեղուկ վառելիքի, գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 150.000 |
| 3) | Թանկարժեք մետաղների մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան ՝ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է. | 50.000 |
| 6. | Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլատվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է, | |
| 1) | առևտրի օբյեկտների համար | 25.000 |
| 2) | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 60.000 |
| 3) | բաղնիքների (սաունաների) համար | 250.000 |
| 4) | խաղատների կազմակերպման համար | 500.000 |
| 5) | շահումներով խաղերի կազմակերպման համար | 250.000 |
| 6) | վիճակախաղերի կազմակերպման համար | 100.000 |
| 7. | Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է. | 1.000 |

| | | |
|---|---|---|
| 8. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է. | |
| 1) | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 3.000 |
| 2) | թունդ ալկոհոլային ( սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 5.000 |
| 3) | այլ արտաքին գովազդի համար | 1.200 |
| 4) | դատարկ գովազդային վահանակների համար | 700 |
| 9. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է. | 1.000 |
| 10. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու(բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է. | 0 |
| 11. | Համայնքի տարածքում տեղական վճարների դրույքաչափերը. | |
| 1) | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 15.000 |
| 2) | Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 10.000 |
| 3) | Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար | 25.000 |
| 4) | Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար | |
| ա. | ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար | 100 |
| բ. | ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար | 10 |
| գ. | ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար | 3.000 |
| դ. | ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար | 9.000 |
| 5) | Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի կողմից տրամադրվող թույլտվության վճար | 5.000 |

*Համայնքի ղեկավար* Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

*Ֆին. բաժնի պետ* Գ. ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 279-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԴԻԼԻՋԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՐԱՄԲԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների համար 2013թ. հունվարի 1-ից սահմանել վարձավճար ՝ բոլոր բաժինների համար ամսական 5000 դրամ, իսկ միաժամանակ երկու բաժին հաճախող երեխաների համար երկրորդ մասնագիտության համար սահմանել զեղչ 30% -ի չափով
2. Նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների սաների համար 2013թ. հունվարի 1-ից սահմանել վարձավճար ամսական 5000 դրամ:
3. 2013թ. հունվարի 1-ից սահմանել զեղչեր համայնքի բնակչության սոցիալական հետևյալ խմբերի համար.
1) երկկողմանի ծնողազուրկ, զոհված կամ հաշմանդամ դարձած ազատամարտիկների երեխաները ազատվում են վարձավճարից
2) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար, ինչպես նաև միևնույն ընտանիքից 2 և ավելի երեխաներ հաճախելու դեպքում սահմանել զեղչ՝ երկրորդ և ավելի երեխաների համար 50 % -ի չափով:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ
4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 280-Ա

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

2013թ. հունվարի 1-ից հանրային զուգարաններից օգտվելու ծառայության վճար յուրաքանչյուր այցելուի համար սահմանել 50 դրամ:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ
2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ
4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
7. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
9. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
10. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
11. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
12. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
13. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
14. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
15. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 281-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ
· Դիլիջանի քաղաքային համայնքի Շահումյան փողոցի թիվ 12 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 0242-0002 ծածկագրով հողում քաղ. Նորիկ Դավթյանի կողմից կառուցված ինքնակամ շինություն, մասնավորապես խանութ 14.3քմ մակերեսով և պարիսպ 10.9գծմ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով ընդգրկել.
· Դիլիջանի քաղաքային համայնքի Շահումյան փողոցի թիվ 12 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 0242-0002 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն, մասնավորապես խանութ 14.3քմ – 167310 դրամ և պարիսպ 10.9գծմ- 28340 դրամ:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

4. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

6. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

7. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 282-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 0510-0001, 0510-0002, 0510-0003, 0510-0004 ԵՎ 0510-0005 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ, 14104.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ Դիլիջանի համայնքի կադաստրային քարտեզագրման տվյալների՝ համայնքի Գյուղատնտեսական նշանակության 0510-0001, 0510-0002, 0510-0003, 0510-0004 և 0510-0005 ծածկագրերով, 14104.0քմ ընդհանուր մակերեսով հողամասը սխալմամբ նշվել է որպես քաղաքացիներին սեփականաշնորհված հողամասեր, այնինչ համայնքում սեփականաշնորհված Գյուղատնտեսական նշանակության հողերի ցանկում վերջիններս ընդգրկված չեն, չեն տիրապետվում և չեն օգտագործվում որևէ անձի կողմից ավելի քան 20 տարի, չեն հանդիսանում որևէ անձի սեփականություն ըստ հողի հարկի բազայի, չեն ընդգրկված համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական հողերի ցանկում:
Համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել՝ նշված հողամասերը որպես Գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողեր համայնքի սեփականության հողային ֆոնդի հաշվեկշռում ընդգրկելու մասին նշված հանձնաժողովի առաջարկը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի կադաստրային քարտեզի 0510-0001, 0510-0002, 0510-0003, 0510-0004 և 0510-0005 ծածկագրերով, 14104.0քմ ընդհանուր մակերեսով հողամասերը որպես Գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողեր համայնքի սեփականության հողային ֆոնդի հաշվեկշռում ընդգրկելու մասին առաջարկին:
2. Առաջարկել Դիլիջանի համայնքի ղեկավարին՝ դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 0510-0001, 0510-0002, 0510-0003, 0510-0004 և 0510-0005 ծածկագրերով, 14104.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը, որպես մեկ գույքային միավոր, պետականորեն գրանցելու նպատակով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 283-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 27/2 ՀԱՍՑԵԻ 743.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Ռաֆիկ Կարոյանը, Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 27/1 հասցեի, իր սեփականությունը հանդիսացող բնակելի տան 1000.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող, Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 27/2 հասցեի 743.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 743.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված բնակելի տան սեփականատեր Ռաֆիկ Կարոյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 27/2 հասցեի 743.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 922806 դրամ արժեքով օտարել քաղ. Ռաֆիկ Կարոյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 27/2 հասցեի 743.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 922806 դրամ արժեքով, քաղ. Ռաֆիկ Կարոյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 284-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 56.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. նոյեմբերի 14-ի թիվ 579-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 56.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 56.0քմ ընդհանուր մակերեսով, թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

Առդասակ.
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2012թ.
նոյեմբերի 15-ի թիվ 284-Ա որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 12/ՔԿ-12/ | Կալինինի 243/21 | 0112-0049 | 28,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 50 տարի | 29 400 դրամ | չկան |
| 2 | Լոտ 13/ՔԿ-12/ | Կալինինի 243/22 | 0112-0048 | 28,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 50 տարի | 29 400 դրամ | չկան |

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող Ա. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2012թվականի N 285-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 6759.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 8 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 10000.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. նոյեմբերի 14-ի թիվ 579-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 6759.0քմ ընդհանուր մակերեսով թվով 8 հողամասերը և «Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից» 10000.0քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 6759.0քմ ընդհանուր մակերեսով թվով 8 հողամասերը և «Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից» 10000.0քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

Այլուսակ.

ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու 2012թ.
նոյեմբերի 15-ի թիվ -285-Ա որոշման

# Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 52/ՔՀ-12/ | Գետափնյա 96/5 | 0142-0044 | 652,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բարեկարգման | 1 630 000 | չկան |
| 2 | Լոտ 53/ՔՀ-12/ | Գետափնյա 96/6 | 0142-0045 | 1 6[illegible]5,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բարեկարգման | 4 [illegible]37 500 | չկան |
| 3 | Լոտ 54/ՔՀ-12/ | Անդրանիկի 1-ին նրբ. 24/2 | 0123-0183 | 1 370,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի կառուցապատման | 3 425 000 | չկան |
| 4 | Լոտ 55/ՔՀ-12/ | Անդրանիկի 1-ին նրբ. 31/1 | 01[illegible]3-0181 | 1 800,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բնակելի կառուցապատման | 4 500 000 | չկան |
| 5 | Լոտ 56/ՔՀ-12/ | Շամախյան 1բ/5 | 0[illegible]-0114 | 75,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 187 500 | չկան |
| 6 | Լոտ 57/ՔՀ-12/ | Մոլդավական 69 | 00[illegible]-0104 | 62,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | ավտոտնակի կառուցման | 155 000 | չկան |
| 7 | Լոտ 58/ՔՀ-12/ | Տ.Պետրոսյան 3-[illegible] նրբ. 32 | 0040-0279 | 645,0 | Բնակավայրերի հ[illegible] | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 1 612 500 | չկան |
| 8 | Լոտ 59/ՔՀ-12/ | Սարալանջի 11 | 053-352 | 500,0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | անհատական բնակելի տան կառուցման | 1 250 000 | չկան |
| 9 | Լոտ 60/ՔՀ-12/ | Դիլիջան-Հանաձոր մայրուղի 5 | 0531-0002 | 10 000,0 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հող | [illegible]արդյունաբերական օբյեկտների | արտադրական նշանակության օբյեկտի կառուցման | 25 000 000 | չկան |

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար

Ա. Մարտիրոսյան